ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Հ-25

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» 01 20.22 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ԳԱԱ), ի դեմս նախագահ Աշոտ Սաղյանի, որը գործում է ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն) ի դեմս տնօրեն Վարդան Դնրիկյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 128.263.400 (մեկ հարյուր քսանութ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ԳԱԱ-ն հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ԳԱԱ,

2.4.6 ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 128.263.400 (մեկ հարյուր քսանութ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով

հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Գ. Լուսավորչի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011024115	Հ/հ 900018005364
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 02505623
Նախագահ՝ _____ *(ստորագրություն)*	Տնօրեն՝ _____ *(ստորագրություն)*
ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ	Վ. Դևրիկյան
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ *(ստորագրություն)* (Վ. Դևրիկյան) *(անուն ազգանուն)*

Հավելված N 1
«27» 01 2022 թ.
N Ա-25 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Աշոտ Սաղյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Վարդան Դերիկյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «____» _____ 2022թ. N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 128.263.400 (մեկ հարյուր քսանութ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ՝	Տնօրեն՝
_____ *(ստորագրություն)*	_____ *(ստորագրություն)*
ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ	Վարդան Դերիկյան

Հավելված N 2
«27» 01 2022 թ.
N 6-25 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայ գրականության պատմություն և տեսություն, հայ դասականների երկերի գիտական հրատարակություն» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ինստիտուտի մեծ և փոքր բազային ծրագրերով իրականացվող աշխատանքների նպատակն է հայ գրականության պատմության համալիր ուսումնասիրությունը գրականության պատմության պարբերացմամբ, ժանրային համակարգով և գրական ուղղություններով, ինչպես նաև հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակությունները ճշգրտված բնագրերով և գիտական ծանոթագրություններով ներկայացնելը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Ինստիտուտի գիտական գործունեության առաջնային նպատակը պետք է լինի հայ գրականության հանրահռչակումը վերլուծության ժամանակակից մեթոդներով և միջազգային հղվող ամսագրերում ներկայացնելով:

Գիտական աշխատանքերը և վերջիններիս արդյունքները արդի տեղեկատվական միջոցներով և գիտական հեղինակավոր ամսագրերում ներկայացնելու համար հարկավոր է.

Ա.Կատարվող աշխատանքները պետք է համապատասխանեն գրականագիտության արդի չափանիշներին, հիմնված լինեն աղբյուրագիտական, գրական սկզբնաղբյուրների, ինչպես նաև տեսական դրույթների վրա, պարունակեն գիտական նոր տվյալներ:

Բ.Հայ գրականությունը պետք է դիտարկվի ոչ միայն պատմական զարգացման մեջ, այլև հարևան ժողովուրդների և ընդհանրապես համաշխարհային գրականության համատեքստում:

Գ.Պարտադիր պայման է քննարկվող հարցերի վերաբերյալ հայ և օտար ժամանակակից գիտնականների տեսակետների վկայակոչումը:

Հայ դասականների երկերի հրատարակության ծրագրի շրջանակում Հովհաննես Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի համալրված վերահրատարակման, Ավետիք Իսահակյանի և Նիկոլ Աղբալյանի երկերի հրատարակությունների ժամանակ տպագրվող գործերը պետք է մանրակրկիտ համեմատվեն բնագրերի հետ, ինչպես որ արվել է մինչև այժմ: Պետք է ներկայացվեն այդ երկերի ստեղծագործական պատմությունները, նրանց գործերում հիշատակվող հատուկ անունների բացատրությունները տրվեն, ինչպես նաև նշվեն սուրբգրային տեղիները:

Հայ գրականությունը համաշխարհային գրականության համատեքստում դիտարկելու, ինչպես նաև ընդգծելու համար ունեցած կարևորությունը տարբեր երկրների և ժողովուրդների պատմության համար աղբյուրագիտական առումով, հրատարակել հայ միջնադարյան սկզբնաղբյուրներում եվրոպական երկրների մասին եղած հիշատակությունները «Հայկական սկզբնաղբյուրները եվրոպական երկրների մասին» խորագրի ներքո:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտում խնդիր է դրվել հայ գրականության պատմությունը ուսումնասիրել համաշխարհային գրականության պատմության համատեքստում և ըստ այդմ, քննել գրականության պատմության ընթացքը: Ելնելով այս դրույթից, մեծ տեղ է տրվում քննության համեմատական մեթոդին: Հատուկ վերլուծվում են համաշխարհային գրականության թափառական սյուժեները հայ գրականության մեջ, տարբեր ժանրերի ստեղծագործությունների տիպաբանական ընդհանրությունները այլ գրականությունների հետ:

Հայ գրականության պատմությունը դիտվում է համաշխարհային գրականության համատեքստում և գրական յուրաքանչյուր փուլ դիտարկվում է համաշխարհային գրականության համապատասխան շրջանների հետ զուգահեռում, ինչպես օրինակ 5-րդ դարի հայ պատմագրությունը 4-5-րդ դարերում անտիկ գրականությունից ընդհանուր քրիստոնեական գրականության անցման շրջանակում, կամ 10-13-րդ դարերի գրականությունը եվրոպական Վերածնության հետ է համեմատվում:

Ուսումնասիրվում է հայ գրականության պատմությունը 18-րդ դարից մինչև 1910-ական թվականներն ընկած շրջանը:

Հատուկ ուշադրություն է դարձվում հայ գաղթավայրերի գրականությանը, որում՝ պայմանավորված եվրոպական գրականության անմիջական ազդեցությամբ, ավելի շուտ են արտահայտվել նոր գրականության անցման նշանները:

Այս շրջանի գրականության պատմությունը վերլուծվում է երեք ուղղությամբ.

Ա. Ըստ գրականության պատմության ընթացքի

Բ. Ըստ գրական ժանրերի

Գ. Ըստ գրականության իրար հաջորդած ուղղությունների՝ կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ:

Դ. 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի եվրոպական և ռուսական գրական ուղղությունների արտացոլումը 20-րդ դարասկզբի հայ գրականության վրա:

Ուսումնասիրվում է 1920-ական թվականներից մինչև այսօրվա հայ գրականությունը հետևյալ պարբերաբաժանմամբ.

Ա. 1920-1950-ական թթ. գրականությունը

Բ. 1960-1980-ական թթ. գրականությունը

Գ. Անկախության շրջանի գրականությունը

Մեկ հարյուրամյակ ընդգրկող գրական ընթացքը դիտարկվում է երկու տեսանկյունից:

Առաջին՝ որպես օրգանական շարունակությունը նախորդող շրջանի հայ գրականության:

Երկրորդ՝ Նորագույն շրջանի հայ գրականությունը համաշխարհային գրականության հետ զուգահեռում, թե վերջին տասնամյակների գրական ուղղությունները ինչ դրսևորումներով են արտահայտվել ժամանակակից հայ գրականությունում:

Սփյուռքահայ գրականությունը ուսումնասիրվում է հետևյալ պարբերացմամբ.

Ա. Մեծ Եղեռնից հետո արևմտահայ գրականությունից Սփյուռքահայ գրականության անցման շրջան:

Բ. Սփյուռքահայ գրականությունը ավանդականորեն ձևավորված հայ համայնքներում 1930-1980-ական թվականներին:

Գ. Սփյուռքահայ գրականության այժմյան շրջանը, այն հարցի քննությամբ, թե 1990-ական թվականներից տարբեր երկրներում հաստատված գրողները որքանով մաս կազմեցին Սփյուռքի գրականությանը և որքանով մնացին որպես հայկական միջավայրում ձևավորված հեղինակներ:

Վերլուծվում են նաև օտարալեզու հայ գրողների ստեղծագործությունները:

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2022թ. լույս կտեսնեն.

-Հովհ. Թումանյանի վերախմբագրված վերահրատարակության հրապարակախոսությունն ընդգրկող վեցերորդ հատորը:

-«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» 1969 թ. ծավալուն հատորի երեք հատորով վերախմբագրված վերահրատարակության երրորդ հատորը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

2022թ. հրատարակության կպատրաստվի «5-18-րդ դարերի հայկական սկզբնաղբյուրները եվրոպական երկրների մասին» գրքի երկրորդ՝ «5-18-րդ դարերի հայկական աղբյուրները Իսպանիայի մասին» հատորը, որն այս շարքի երկրորդ գիրքն է:

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2022 թ. լույս կտեսնեն

Ա. Ավետիք Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուի 7-րդ հատորը՝ «Ուստա Կարո» վեպի երկրորդ տարբերակի առաջին գիրքը:

Բ. Ավետիք Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուի 8-րդ հատորը, որն ընդգրկում է «Հիշատակարանը»:

Գ. Ղևոնդ Ալիշանի եղբոր՝ Սերովբե Ալիշանի «Նամականին», ուր կարևոր տեղեկություններ կան Մխիթարյան միաբանության գրական-հասարակական գործունեության մասին:

5. Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդված, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում, գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում:

Նշված բոլոր կետերում հիշված աշխատանքները կտպագրվեն առանձին գրքերով՝ ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Աշխատանքի տարբեր դրույթները կտպագրվեն ՀՀ ԲՈԿ-ի ցանկում գտնվող, ինչպես նաև արտասահմանում հոման գործակից ունեցող հանդեսներում: Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում 2022թ-ին կտպագրվեն նվազագույնը 15 հոդված:

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վարդան Դերբիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վարդան Դերիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 3
«27» 01 2022 թ.
N Ն-25 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հայ գրականության պատմություն և տեսություն, հայ դասականների երկերի գիտական հրատարակություն» ծրագրի

(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Ղևոնդ Ալիշանի գիտագրական ժառանգությունը	Գիրքը նվիրված է Ղևոնդ Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունների և գիտական աշխատությունների գրականագիտական վերլուծությանը	Ի մի են հավաքված Ղևոնդ Ալիշանի բոլոր ստեղծագործությունները՝ բանաստեղծական չափածո, արձակ, հրապարակախոսական հոդվածներ և գիտական աշխատություններ	Առաջին անգամ ամբողջական վերլուծության են ենթարկվում Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունները և ցույց է տրվում դրանց ունեցած գրական արժեքը և կապը նախորդ շրջանի հայ գրականության ավանդների հետ, ինչպես նաև Ալիշանի գիտական աշխատությունների տեղը 19-րդ դարի հայագիտության շրջանակում: Հետազոտության արդյունքները կտպագրվեն առանձին մենագրությամբ:	2022 թ. մարտ	25652.6
2	Ֆ. Դոստոևսկի, Ն. Նեկրասով, Գ. Ֆլոբեր – 200, Միջազգային գիտական նստաշրջանի	Ներկայացվում են տարբեր հրապարակումներ՝ նվիրված հիշյալ հեղինակների գրական	Գրքում տեղ գտած հրապարակումները կօգնեն այս հեղինակների ստեղծագործությունները դիտարկել		2022 թ. ապրիլ	32065.9

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել ըստ ժամանակագրական հերթականության

	նյութերի ժողովածու	ժառանգությանը, հայ և ռուս գրականություններ ի հետ ունեցած կապերին	համաշխարհային գրականության շրջագծում, կվերլուծվեն այդ հեղինակների ստեղծագործություններ ը՝ ըստ ժանրային առանձնահատկությունն երի			
3	Մերովբե Ալիշան, «Նամականի»	Գրքում զետեղված են Մերովբե Ալիշանի եղբորը՝ Ղևոնդ Ալիշանին գրված և մեզ հասած ավելի քան հազար նամակ	Ակադեմիական չափանիշներով կներկայացվեն նամակների ճշգրտված բնագրերը նոր ծանոթագրություններով	Կներկայացվեն յուրաքանչյուր նամակի գրության հետ կապված հանգամանքները և թե ինչ հարցեր են արծարծվում և ինչ անձնավորություններ ու թեմաներ են հիշվում նամակներում	2022 թ. մայիս	
4	Գիտական նստաշրջան՝ նվիրված Յու. Վեսելովսկու ծննդյան 150-ամյակին	Յու. Վեսելովսկու գրականագիտական ուսումնասիրությունները կներկայացվեն հայ-ռուս գրական կապերի շրջանակում	Կարդացվող զեկուցումները նվիրված կլինեն Վեսելովսկիների ընտանիքի գիտագրական ժառանգությանը և Յու. Վեսելովսկու գրականագիտական հայացքներին	Ի մի կբերվի Յու. Վեսելովսկու գիտական և թարգմանական ժառանգությունը, տարբերակված կներկայացվեն նրա համաշխարհային, ռուս և հայ գրականություններին նվիրված հոդվածները	2022 թ. հուլիս	32065.9
5	Ավետիք Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածուի 7-րդ հատոր	«Ուստա Կարո» վեպի երկրորդ տարբերակի առաջին գիրք	Տպագրվում են վեպի երկրորդ խմբագրության գլուխների մի մասը ծանոթագրություններով և բնագրային տարբերակներով	Ցույց է տրվում վեպի ունեցած ստեղծագործական ուղին զարգացման ընթացքի մեջ: Յուրաքանչյուր գլխի տարբերակներով երևում է, թե ժամանակի պատմա-քաղաքական իրավիճակով պայմանավորված վեպը ինչ շարունակական փոփոխությունների է ենթարկվել	2022թ. օգոստոս	
6	Ավետիք Իսահակյանի երկերի լիակատար	Իսահակյանի «Հիշատակարանը»	Գիտական ամբողջական նոր բնագիրը կրճատված հատվածների վերականգնմամբ և նոր	Համապատասխան ծանոթագրություններով կներկայացվի յուրաքանչյուր	2022թ. սեպտեմբեր	

	ժողովածուի 8-րդ հատոր		մասերի ավելացմամբ	գրառումը, թե այն ինչ առիթով է գրված և կբացատրվեն այնտեղ հիշված հատուկ անունները և Վարպետի կողմից արծարծված խնդիրները		
7	Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածուի 6-րդ հատորի վերախմբագրված վերահրատարակություն	Հատորում տեղ են գտել Թումանյանի հրապարակախոսական հոդվածները	Ճշգրտված բնագրերը նոր ծանոթագրություններով	Առավել ամբողջական և ճշգրտված բնագրերով և յուրաքանչյուր ստեղծագործության պատմությամբ և օգտագործված սկզբնաղբյուրների ներկայացմամբ կբերվեն և կծանոթագրվեն Թումանյանի դապարակախոսական հոդվածները, որոնք վերաբերում են ոչ միայն ժամանակի հայ գրականությանը, այլ և հայ ժողովրդի պատմա-քաղաքական վիճակին	2022 թ. հոկտեմբեր	38479.0
Ընդամենը						128263.4

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վարդան Դերիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վարդան Դերիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 4
«27» 01 2022 թ.
N 2-25 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հայ գրականության պատմություն և տեսություն, հայ դասականների երկերի գիտական հրատարակություն» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	123467.6	*24693.5*	*30866.9*	*30866.9*	*37040.3*
2	տնտեսական և այլ ծախսեր	4795.8	*959.1*	*1199.0*	*1199.0*	*1438.7*
ԸՆԴԱՄԵՆԸ		128263.4	***25652.6***	***32065.9***	***32065.9***	***38479.0***

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վարդան Դևրիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Սոնա Սոլակյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 4.1
«27» 01 20..22 թ.
N 6-25 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	2125.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*1200.0*
	գազի ծառայություն	
	ջրամատակարարման ծառայություն	*555.0*
	կապի ծառայություն	*370.0*
	աղբահանություն	
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	600.0
4	Նյութեր	170.8
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	1100.0
	.....	800.0
Ընդամենը		**4795.8**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վարդան Դերիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (Սոնա Սոլակյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«27» 01 20.. թ.
N 6-25 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայ գրականության պատմություն և տեսություն, հայ դասականների երկերի գիտական հրատարակություն» ծրագրի

(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1.	Դևրիկյան Վարդան Գևորգի	Տնօրեն	բ.գ.դոկտոր	400000
2.	Աբրահամյան Սուրեն Սերյոժայի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու, դոցենտ	349880.60
3.	Ալեքսանյան Սլավիկ Գարսևանի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	150137.80
4.	Ավանեսյան Արմեն Ավանեսի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու	349880.60
5.	Ավետիսյան Լուսինե Արարատի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	150137.80
6.	Ավետիսյան Սաթենիկ Հարությունի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	250009.20
7.	Արիստակեսյան Ռուզաննա Բուլիկի	Գիտաշխատող	բ.գ.դոկտոր	75068.90
8.	Բալայան Նաիրա Մելսիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	199742.80
9.	Բեջանյան Քրիստինե Հենրիկի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու, դոցենտ	174940.30
10.	Գալոյան Էմմա Ժորայի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	99871.40
11.	Գասպարյան Գուրգեն Էդվարդի	Գիտաշխատող		75068.90
12.	Գասպարյան Լուիզա Արեգի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	75068.90
13.	Դեմիրճյան Պետրոս Հակոբի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	250009.20
14.	Էդոյան Հենրիկ Անտոնի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	250009.20
15.	Թորոսյան Հայկուշ Ռաֆիկի	Գրադարանավար		105000
16.	Իսահակյան Ավետիք Վիգենի	Բաժնի վարիչի ժ/պ, տնօրենի խորհրդական,	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	349880.60
17.	Խաչատրյան Մարգարիտա Մամիկոնի	Ավագ գիտաշխատող	բ.գ.դոկտոր	199742.80

* *Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը*

18.	Խաչատրյան Շողիկ Բորիկի	Կրտսեր գիտաշխատող	բ.գ.թեկնածու	119713.40
19.	Խաչատրյան Թադևոս Արշավիրի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	150137.80
20.	Կարագյոզյան Գոհար Լևոնի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	199742.80
21.	Կիրակոսյան Հայկ Մկրտչի	Պարետ		105000
22.	Հակոբյան Անահիտ Պիոնի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	150137.80
23.	Համբարձումյան Նաիրա Վալերիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	199742.80
24.	Հայրյան Զարուհի Գևորգի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	125004.60
25.	Հարությունյան Լաուրա Ժորայի	Ավագ լաբորանտ		135000
26.	Հովհաննիսյան Սուսաննա Գուրգենի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր, դոցենտ	250009.20
27.	Հովհաննիսյան Քրիստինե Բանդիկի	Կրտսեր գիտաշխատող		119713.40
28.	Ղազարյան Անի Վաչիկի	Կրտսեր գիտաշխատող	բ.գ.թեկնածու	119713.40
29.	Ղազարյան Դերենիկ Զարմաիլի	Պահակ		110000
30.	Ղազարյան Վաչիկ Վանուշի	Տնտեսվար		120000
31.	Մանուկյան Արմեն Լևոնի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	199742.80
32.	Մարգարյան Սիրուշ Ալեքսանդրի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու, դոցենտ	349880.60
33.	Մելքումյան Քրիստինե Խորենի	Գործերի կառավ. – գործավար, կրտսեր գիտաշխատող		138000
34.	Մկրտչյան Նունե Լենսերի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	199742.80
35.	Մուշեղյան Ալբերտ Վարազդատի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	250009.20
36.	Մնացականյան Եվա Ժորայի	Խմբի ղեկավար	բ.գ.թեկնածու	230167.20
37.	Նավասարդյան Վահան Սուրենի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	75068.90
38.	Նիկողոսյան Արքմենիկ Հրայրի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	199742.80
39.	Որսկանյան Հերիքնազ Վանիկի	Փոխտնօրեն-գիտքարտուղար, ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	399871.40
40.	Սարգսյան Մարինե Հրանտի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	150137.80
41.	Սարգսյան Նառա Ղարիբի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	150137.80

42.	Սարիբեկյան Հրաչյա Հարությունի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	199742.80
43.	Սարինյան Մանե Սերգեյի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	75068.90
44.	Սեյրանյան Լիլիթ Բորիսի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	250009.20
45.	Սոլակյան Սոնա Վարդգեսի	Գլխ. հաշվապահ		230000
46.	Սողոյան Աստղիկ Վալերիանի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	150137.80
47.	Վարդանյան Լուսինե Մկրտչի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	199742.80
48.	Վիրաբյան Լաուրա Կարապետի	Գիտաշխատող		75068.90
49.	Տերտերյան Աստղիկ Աշոտի	Մաքրուհի		60000
50.	Փարսադանյան Սիրանուշ Հովիկի	Կրտսեր գիտաշխատող		119713.40
51.	Զարգարյա Արա Սմբատի (կիրամանագրվի 01.02.2022թ)	Կրտսեր գիտաշխատող		119713.40
52.	Հովհաննիսյան Միհրան Վահանի (կիրամանագրվի 01.02.2022թ)	Կրտսեր գիտաշխատող		119713.40
53.	Թափուր	Ավագ գիտաշխատող		199742.80
54.	Թափուր	Ավագ գիտաշխատող		199742.80
55.	Թափուր	Գիտաշխատող		150137.80
56.	Թափուր	Գիտաշխատող		150137.80
57.	Թափուր	Կրտսեր գիտաշխատող		119713.40
58.	Թափուր	Կրտսեր գիտաշխատող		119713.40
Ընդամենը				**10.288.964.10**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վարդան Դերիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (Քրիստինե Մելքումյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.